



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 2 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ  
Ո Ր Ո Շ ՈՒ Մ Ը

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

6 մայիսի 2016թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի  
թիվ 2 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Հ. Նազարյանի

Անդամակցությամբ՝ Կ. Բալայանի

Ա. Խաչատրյանի

Ուսումնասիրելով «Հայկական ծրագրեր» ՍՊԸ-ի անհատական դիմումի  
ընդունելիության հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց .**

1. Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի՝ «Հայկական ծրագրեր» ՍՊԸ-ն (ներկայացուցիչ՝ Ռուստամ Բադասյան) 25.04.2016թ. դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով որոշել ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հոդվածի 1-ին մասի, 69-րդ հոդվածի 1-ին մասի՝ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ (այնքանով, որքանով չեն նախատեսում ոչ վերջնական գործողությունների վիճարկումը դատական կարգով այն պարագայում, երբ դրանք ինքնուրույն խախտում (միջամտում) են անձանց իրավունքներն ու ազատությունները)՝ ՀՀ Սահմանադրության 61-րդ

հողվածի 1-ին մասին, 63-րդ հողվածի 1-ին մասին, 75-րդ, 78-րդ եւ 79-րդ հողվածներին համապատասխանության հարցը:

Ըստ դիմողի՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 3-րդ հողվածի 1-ին մասը եւ 69-րդ հողվածի 1-ին մասը՝ պրակտիկայում դրանց տրված մեկնաբանությամբ, իսպառ բացառում են, բացի վերջնական վարչական կամ ռեալ ակտերից, վարչական մարմինների վարույթի նախապատրաստական կամ ընթացիկ փուլերում այլ գործողությունների մասով դատական պաշտպանության իրավունքի իրացումը՝ այն պարագայում, երբ դրանք իրենցից առանձին միջամտում, խախտում են ներկայացնում: Նման իրավիճակը հակասում է ՀՀ Սահմանադրության վկայակոչված հողվածներով նախատեսված արդյունավետ դատական պաշտպանության իրավունքին, հիմնական իրավունքների սահմանափակման թույլատրելի չափանիշներին:

Դիմողը գտնում է, որ վարչական մարմինների գործողությունները, որոնք խախտում են անձանց իրավունքները, անկախ այն հանգամանքից, թե դրանք իրականացվում են վարույթի ընթացքում, թե վարույթն ավարտող վերջնական ակտով, պետք է ենթակա լինեն դատական պաշտպանության, հակառակ դեպքում կխաթարվի իրավունքի բուն էությունը:

2. Ելնելով դիմումի եւ կից փաստաթղթերի ուսումնասիրությունից եւ ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32 եւ 69-րդ հողվածների պահանջներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը գտնում է, որ գործը ենթակա է մերժման ակնհայտ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Այսպես, վիճարկվող դրույթների ենթադրյալ հակասահմանադրականությունը դիմողը փորձում է հիմնավորել ենթադրյալ օրենսդրական բացի լույսի ներքո: Հարկ է նշել, որ օրենսդրական բացը՝ որպես իրավունքի բացի տարատեսակ, իրավական կարգավորման ոլորտում գտնվող փաստական հանգամանքների նկատմամբ կոնկրետ նորմատիվ պատվիրանի բացակայությունն է: ՀՀ սահմանադրական դատարանն իր՝ 2010 թվականի փետրվարի 5-ի ՍԴՈ-864 որոշման մեջ անդրադառնալով իրավունքի բացի հաղթահարման գործում սահմանադրական դատարանի և օրենսդիր մարմնի իրավասությունների հարաբերակցությանը՝ նշել է. «...որ բոլոր դեպքերում, երբ իրավունքի բացը պայմանավորված է

իրավակարգավորման ոլորտում գտնվող կոնկրետ հանգամանքների առնչությամբ նորմատիվ պատվիրանի բացակայությամբ, ապա նման բացի հաղթահարումն օրենսդիր մարմնի իրավասության շրջանակներում է: Սահմանադրական դատարանը գործի քննության շրջանակներում անդրադառնում է օրենքի այս կամ այն բացի սահմանադրականությանը, եթե վիճարկվող նորմի բովանդակությամբ պայմանավորված իրավական անորոշությունն իրավակիրառական պրակտիկայում հանգեցնում է տվյալ նորմի այնպիսի մեկնաբանությանն ու կիրառմանը, որը **խախտում է կամ կարող է խախտել** կոնկրետ սահմանադրական իրավունք»: Ջարգացնելով իր վերոնշյալ իրավական դիրքորոշումները՝ Սահմանադրական դատարանը 2010 թվականի սեպտեմբերի 14-ի ՍԴՈ-914 որոշմամբ արձանագրել է, որ օրենսդրական բացը կարող է հանդիսանալ սահմանադրական դատարանի քննության առարկա միայն այն դեպքում, երբ օրենսդրության մեջ առկա չեն այդ բացը լրացնելու այլ իրավական երաշխիքներ կամ օրենսդրության մեջ համապատասխան իրավական երաշխիքների առկայության պարագայում ձևավորված է հակասական իրավակիրառական պրակտիկա, երբ առկա օրենսդրական բացը չի ապահովում այս կամ այն իրավունքի իրացման հնարավորությունը:

Խնդրո առարկա գործի շրջանակներում դիմողի առաջ քաշած փաստարկներն առ այն, որ վիճարկվող հոդվածներում առկա իրավական բացով պայմանավորված ստեղծվել է մի իրավիճակ, որը «հնարավորություն չի տալիս դատական կարգով բողոքարկել վարչական վարույթը սկսող և ընթացիկ գործողությունները, մինչդեռ բազմաթիվ վարույթներ հենց սկսման պահից կարելի է համարել հասունացած դատական պաշտպանության համար», ակնհայտ անհիմն են, քանի որ մատնանշվող **«խնդիրը»** պայմանավորված է ողջ վարչական դատավարության օրենսդրությամբ, այլ ոչ թե դիմողի կողմից վկայակոչված կոնկրետ հոդվածներով: Բացի դրանից, ՀՀ վարչական վերաքննիչ դատարանն իրավական դիրքորոշումներ է արտահայտել առ այն, որ «... այն դեպքերում, երբ վարչական վարույթը եզրափակվում է վարչարարության արդյունքում ընդունված վարչական ակտով, ապա անձի համար իրավական հետևանքներ կարող է առաջացնել միայն այդ ակտը, այլ ոչ թե այդ ակտի ընդունմանն ուղղված գործողությունները, քանի որ անձի ենթադրյալ իրավունքները խախտող ակտի վիճարկումն արդեն իսկ ենթադրում է, որ դատարանն այս պարագայում անպայմանորեն պետք է անդրադառնա և քննարկման առարկա դարձնի ակտի ընդունմանն ուղղված բոլոր

գործողությունների իրավաչափության հարցը, ինչի արդյունքում էլ, ի վերջո, կլուծվի վարչական ակտի ճակատագիրը՝ առանց լրացուցիչ պահանջների ներկայացման»: Այսինքն, առկա է անձի իրավունքների ենթադրյալ խախտումների պաշտպանության՝ **օրենքով սահմանված հստակ եղանակ**, այն է՝ վարչարարության հետևանքով կայացվելիք վերջնական վարչական ակտի վիճարկում, եթե կողմը կգտնի, որ դրանով խախտվել են իր իրավունքները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ և 69-րդ հոդվածներով՝ ՀՀ սահմանադրական դատարանի թիվ 2 դատական կազմը՝

### **Ո Ր Ո Շ Ե Ց .**

«Հայկական ծրագրեր» ՄՊԸ-ի անհատական դիմումով գործի քննության ընդունումը մերժել:

**Նախագահող՝**

**Անդամներ՝**

6 մայիսի 2016 թվականի  
ՍԴԴԿՈ/2-12